ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հուլիսի 2022 թվականի N 273 -Ա

«ԿԱՊԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԿԱՐԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ, ԱՍԱՏՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ ՆՈՒՅՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 14-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի N 129-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ, 8-րդ կետերը և Կ. Մելքոնյանի ու Ա. Ասատրյանի դիմումները՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. 2022թ. հուլիսի 22-ից լուծել «Կապանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Կարեն Մելքոնյանի հետ 2018թ. ապրիլի 4-ին կնքված N 9 աշխատանքային պայմանագիրը:
2. Ասատուր Ասատրյանին 2022թ. հուլիսի 22-ից նշանակել «Կապանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնակատար՝ մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ընկերության տնօրենի ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու հիմքի վերացումը:
3. «Կապանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունում հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
4. Հանձնաժողովին՝ հանձնման-ընդունման աշխատանքներն ավարտել հնգօրյա ժամկետում և արդյունքները ներկայացնել քննարկման:

19.07.2022

Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

Подписано: GHUKASYAN ROBERT 3712800290

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

ք. Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
2022թ. հուլիսի 18-ի
N 23 -Ա որոշման

ԿԱԶՄ

«Կապանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունում հանձնման-ընդունման հանձնաժողովի

Նարեկ Դավթյան	Մարզպետի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ (հանձնաժողովի նախագահ).
Նունե Գևորգյան	Մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ
Արմեն Թադևոսյան	Մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ
Թամար Ստեփանյան	Մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ
Մարինե Աբգարյան	Մարզպետի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ
Ասատուր Ասատրյան	«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի պաշտոնակատար, ընդունող:
Կարեն Մելքոնյան	«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի նախկին տնօրեն, հանձնող.

19.07.2022

X

ԳՐԻԳՈՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Подписано: TADEVOSYAN GRIGOR 1909590101

ՀՀ Սյունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղարին փոխարինող՝ **Գ. Թադևոսյան**